ՄԱՄԻԿՈՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Մինչև վերջերս լույս տեսած հանրագիտարաններում[1], կենսագրական բառարանում[2] և գրական տեղեկատուներում[3] լրագրող, բանասեր, թարգմանիչ, բառարանագիր, մշակութային գործիչ Մամիկոն Գևորգյանին ներկայացնող հոդվածներում հավուր պատշաճի չի լուսաբանված նրա կյանքը և գործունեությունը որպես XX դարի առաջին կեսի նշանավոր մտավորականներից մեկի:

Հայաստանի ազգային արխիվում գտնվեց Մ. Գևորգյանի ձեռքով՝ 1942 թ. հունիսի 8-ին լրացված «Կադրերի հաշվառման անձնական թերթիկ»-ը և ինքնակենսագրությունը[4]: Դրանցում կան փաստեր, որոնց մասին վերոնշյալ տեղեկատուներում որևէ հիշատակություն չկա:

Ինքնակենսագրության մեջ Մ. Գևորգյանը հայրանունը գրել է՝ Արտեմի, փակագծում՝ Հարությունի, իսկ անձնական թերթիկում՝ միայն Արտեմի, հետագայում միշտ գրել է Արտեմի:

Մ. Գևորգյանը ծնվել է 1877 թ. նոյեմբերի 17 (29)-ին, Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Օրդուբադի շրջանի Քաղաքիկ գյուղում: Նրա պապը հողագործ գյուղացի է եղել, հայրը՝ միջակ կարողության առևտրական: Սկզբնական կրթությունը ստացել է Ագուլիսի ծխական դպրոցում: Տասը տարեկանում տեղափոխվում է Մոսկվա: Սկզբում սովորում է Լազարյան ճեմարանում, որն ավարտում է 1897 թ., իսկ հետո ընդունվում Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1901 թ. ավարտում է համալսարանը 1-ին կարգի դիպլոմով: Համալսարանում գրում է «Վաղ տիրապետության շրջանը ըստ ռուսական իրավունքի» թեմայով աշխատանք և արժանանում գովասանական գնահատանքի: Ավարտելուց հետո ընդունվում է փաստաբա-

---

[1] *Հայկական սովետական հանրագիտարան, հ. 3, Երևան, 1977, էջ 20, տե՛ս նաև՝ Հայկական համառոտ հանրագիտարան, չորս հատորով, հ. 1, Երևան, 1990, էջ 640: Ով ով է. հայեր (կենսագրական հանրագիտարան), երկու հատորով, հ. 1, Երևան, 2005, էջ 280:*

[2] *Գ. Ս տ ե փ ա ն յ ա ն. Կենսագրական բառարան (հայ մշակույթի գործիչներ), երեք հատորով, հ. Ա, Երևան, 1973, էջ 242:*

[3] *Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Գրական տեղեկատու, ՀՍԳՄ անդամներ, 1934–1974, Երևան, 1975, էջ 140–141: Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Գրական տեղեկատու, Երևան, 1981, էջ 90-91, ն ո ւ յ ն ի՝ Գրական տեղեկատու, ՀՍԳՄ անդամներ, 1934–1986, Երևան, 1986, էջ 117–118:*

[4] *Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1, ց. 123, գ 3562Ա:*

նական դաս և զբաղվում առավելապես իրավախորհրդատվությամբ: 1901-1903 թթ. աշխատել է Մոսկվայում, 1903-1912 թթ. Թիֆլիսում, 1912-1916 թթ. Կոկանդում (Ուզբեկստան), որից հետո նորից տեղափոխվել է Թիֆլիս:

Արտասահմանյան ուղևորության Մ. Գևորգյանը մեկնել է երկու անգամ: 1901 թ. օգոստոսից նոյեմբեր եղել է Ֆրանսիայում (Փարիզ) և Գերմանիայում (Բեռլին): Երկրորդ անգամ ուղևորության է մեկնել 1906 թ. հուլիս–օգոստոս ամիսներին: Անձնական թերթիկում գրել է, որ եղել է Աթենքում, Հռոմում, Լյուցեռնում, Ցյուրիխում, Մյունխենում, Վիեննայում: Ինքնակենսագրության մեջ Մ. Գևորգյանը նշել է երկրները. դրանք են՝ Թուրքիա, Հունաստան, Իտալիա, Շվեյցարիա, Ավստրիա, Գերմանիա, Լեհաստան: Թուրքիան և Լեհաստանը անձնական թերթիկում նշված չեն:

*1917 թ. փետրվարյան հեղափոխության ժամանակ Մ. Գևորգյանը ապրել է Թիֆլիսում: 1917 թ. մարտից մինչև 1919 թ. աշխատակցել է այստեղ լույս տեսնող «*Кавказское слово*» թերթին, որից հեռացել է, ինչպես գրում է Մ. Գևորգյանը, «թերթի ղեկավարության հայացքների հետ տարաձայնության պատճառով»: Նրա անվանը կարելի է հանդիպել 1917–1920 թթ. «*Кавказское слово*», «*Слово*» (Թիֆլիս) և «*Тифлисский листок*» (1906) պարբերականներում[5]:*

1921 թ. գործուն մասնակցություն է ունենում Թիֆլիսի Հայարտան (Հայ արվեստի տուն) կազմակերպմանը և ընդգրկվում այդ խորհրդի կազմում որպես նախագահի (Հովհաննես Թումանյան) տեղակալ: Հայաստանի օգնության կոմիտե (ՀՕԿ) հիմնելու համար 1921 թ. օգոստոսին Երևանում կայանալիք խորհրդակցությանը Թիֆլիսից հրավիրվում են Հայարտան 18 անդամներ, ի թիվս որոնց՝ Հովհաննես Թումանյանը, Լեոն, Դերենիկ Դեմիրճյանը, Գարեգին Լևոնյանը, Մամիկոն Գևորգյանը և այլք: Խորհրդակցության ավարտից հետո ՀԽՍՀ կառավարության ղեկավար Ալեքսանդր Մյասնիկյանը իր մոտ զրույցի է հրավիրում Մ. Գևորգյանին, որին ճանաչում էր դեռևս Լազարյան ճեմարանից և առաջարկում ստանձնել Պետական թատրոնի տնօրենի պաշտոնը: Միաժամանակ ասում է, որ այդ առաջարկն անում է Պողոս Մակինցյանի և Ասքանազ Մռավյանի խորհրդով:

1921 թ. օգոստոսի 16-ին Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդը հաստատում է Երևանում պետական թատրոն ստեղծելու առաջարկը և թատրոնի կազմակերպման գործը հանձնարարում Պողոս Մակինցյանին, Լևոն Քալանթարին և Մամիկոն Գևորգյանին[6]: Մ. Գևորգյանը դառնում է Պետական թատրոնի առաջին տնօրենը և 1921-1928 թթ. ոչ մեծ ընդմիջումներով վարում այդ պաշտոնը:

«Խորհրդային Հայաստան» թերթում հայտարարություն է տպագրվում, որ «ՀԽՍՀ Լուսժողկոմը ընձեռել է նախապատրաստական աշխատանք գրական-գիտական, հասարակական և քաղաքական «Նորք» պարբերական հանդեսի հրատարակման»[7]: Հանդեսի խմբագիրներ էին նշանակված Ա. Հովհաննիսյանը, Պ. Մակինցյա-

---

[5] Кавказское слово, 1917, № 159, 217, 226, 233, 258, 263, 267, 275, 282; 1918, № 3, 7, 24, 37; 1919, № 142, 167; Слово, 1919, № 12,55; 1920, № 245, 247, 269, 274, 286; Тифлисский листок; 1906, 1 116. *Տե՛ս Բ. Մ. Հ ո վ ա կ ի մ յ ա ն. Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005, էջ 511:*

[6] *Հայ սովետական թատրոնի պատմություն, Երևան, 1967, էջ 18:*

[7] *«Խորհրդային Հայաստան», 1. VI. 1922:*

նը և Ա. Մռավյանը: Խմբագրության պատասխանատու քարտուղար է նշանակվում Մ. Գևորգյանը՝ մնալով հանդերձ թատրոնի դիրեկտորի պաշտոնում[8]: Նշենք, որ «Նորք» հանդեսի խմբագրությունը տեղավորված է եղել Պետական թատրոնի շենքում:

1928 թ. Մ. Գևորգյանը նշանակվում է Ա. Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարանի (ներկայումս՝ Հայաստանի ազգային գրադարան) տնօրեն՝ Երվանդ Թաղիանոսյանից հետո: Այս կարևոր իրողության մասին տեղյակ ենք դարձել պատահաբար, քանի որ նրա անունը՝ որպես տնօրենի, ընդհանրապես չի շրջանառվել:

Հայաստանի ազգային գրադարանի արխիվում պահպանվում է հրամանի գիրք, որի կազմի վրա գրված է հետևյալը. «Հայկ. ՍՍՀ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատ. Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարան: Ընդհանուր բաժին. գործ № 1 (ըստ երևույթին հետագայում է նշվել № 1 – Ռ. Ղ.): Հանրային գրադարանի հրամանի գիրք. սկսված է 18 մայիսի 1931 թիվ ավարտված է 7 հոկտեմբերի 1931 թիվ [ընդ որում 1932 թիվ է գրված եղել, սակայն 193(2)-ի վրա 1 է դարձվել և թվի տակ մատիտով նույնպես գրվել է 1931: Այսինքն՝ ճշտվել է համապատասխանեցնելով բովանդակությանը – Ռ. Ղ.]: Բաղկացած է 64 թերթից»:

Հրամանի գիրքը սկսվում է № 21 հրամանով, որը թվագրված է 1931 թ. մայիսի 18-ին: Սա վկայում է այն մասին, որ դրանից առաջ եղել է նաև մեկ ուրիշ գիրք, որտեղ գրանցվել է մինչև № 20-ը եղած հրամանները: Այս գրքում գրանցված է մինչև № 75-ը ընդգրկող հրամանները, որը թվագրված է 19 հոկտեմբերի 1931 թվական, այսինքն՝ ավարտված է ոչ թե հոկտեմբերի 7-ով, այլ 19-ով: Հրամանագրքի 75-րդ հրամանից հետո առանձին թղթերի վրա գրված են հրամանների տեքստեր, որոնք հետո են անցկացվել վերոհիշյալ հրամանագրքի մեջ:

Հրամանագիրքը նայելիս պարզվեց, որ 1931 թ. հունիսի 25-ի № 29 հրամանը ազդարարում է, որ «Համաձայն Լուսժողկոմի ս/թ. հունիսի 4-ի № 10 հրամանի § 1-ի և ս/թ. հունիսի 16-ի լրացուցիչ հրամանի, սույն թվից Հանրային գրադարանի դիրեկտորի պաշտոնը հանձնեցի նոր նշանակված դիրեկտոր ը. Սուրեն Մարկոսյանին: Դիրեկտոր (ստորագրությունը Մ. Գևորգյանինն է – Ռ. Ղ.)»: Նույն օրվա № 30 հրամանում գրված է, որ «Համաձայն Լուսժողկոմի ս/թ. հունիսի 4-ի № 10 հրամանի § 1-ի և ս/թ. հունիսի 16-ի լրացուցիչ հրամանի, սույն թվից ստանձնեցի Հանրային գրադարանի դիրեկտորի պաշտոնը: Դիրեկտոր (ստորագրությունը Ս. Մարկոսյանինն է –Ռ. Ղ.)»:

«Գրադարանային գործի պատմությունը Սովետական Հայաստանում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուի առաջին հատորում (1920–1941) զետեղված № 72 փաստաթուղթը (էջ 113) վկայում է, որ մինչև առնվազն 1928 թ. մարտի 1-ը գրադարանի տնօրեն է եղել Ե. Թաղիանոսյանը:

Մեկ այլ փաստաթուղթ (№ 78, էջ 128-130), որը ենթադրաբար վերագրվում է 1929 թ., որպես գրադարանի տնօրեն նշված է Հ[ակոբ] Զորյանը:

Վերոնշյալ փաստաթղթերի ժողովածուում 1928–1932 թթ. ժամանակահատվածի համար ներկայացված է 28 փաստաթուղթ (№ 71–98, էջ 113–156): Դրանցից միայն -

---

[8] *Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին (Չարենցի հետ), Երևան, 1961, էջ 258-259:*

82-ում[9] (1929 թ. 29 հունվարի) է նշված Մ. Գևորգյանի անունը: Փաստաթղթի բովանդակությունից չի երևում, որ Մ. Գևորգյանը գրադարանի տնօրեն է եղել, ուղղակի պետք է ենթադրել:

Մի իրողության մասին ևս: Վերոնշյալ փաստաթղթերի ժողովածուի էջ 308–321-ում տրված է «Ժողովածուում չընդգրկված արխիվային փաստաթղթերի ցանկ», որտեղ նկարագրված 28 փաստաթուղթ տեղ չեն գտել ժողովածուում: Գուցե՞ դրանց մեջ հիշատակված լինի Մ. Գևորգյանի անունը: Ինչևէ:

Մ. Գևորգյանը գրադարանի տնօրեն է եղել 1928–1931 թթ. հունիսի 16-ը, իսկ հաջորդ տնօրեն Սուրեն Մարկոսյանի հետ հանձնում-ընդունումն ավարտվում է հունիսի 25-ին:

Իր անձնական թերթիկում Մ. Գևորգյանը գրել է, որ Հանրային պետական գրադարանի տնօրեն է եղել 1928–1932 թվականներին, իսկ դրանից հետո՝ 1932–1933 թթ. եղել է Հայաստանի պետական օպերայի և բալետի թատրոնի տնօրեն, որը կազմակերպվել ու բացվել է նրա անմիջական ջանքերով:

1934-ին Մ. Գևորգյանը իր ցանկությամբ տեղափոխվում է Հայկինո՝ գրական-գեղարվեստական խորհրդականի և կինոսցենարիստի պաշտոնով: Անձնական թերթիկում նա գրել է, որ Հայկինո է տեղափոխվել 1933-ին և աշխատել է մինչև 1937-ը:

1936 թ. Մ. Գևորգյանը դառնում է Հայաստանի խորհրդային գրողների միության անդամ, զբաղվում է դրամատուրգիայով, կինոդրամատուրգիայով և թարգմանություններով:

Անձնական թերթիկում Մ. Գևորգյանը նշում է, որ 1937–1941 թթ. զբաղվել է գրական գործունեությամբ: Դժվար չէ պատկերացնել, որ գրական գործունեության անցնելը պայմանավորված է եղել նրա նկատմամբ բռնաճնշումներով: Ինչպես ժամանակի բազմաթիվ մտավորականներ, այնպես էլ Մ. Գևորգյանը կանգնել է դատարանի առջև: Իր ինքնակենսագրության մեջ Մ. Գևորգյանը գրում է, որ 1939 թ. դատի է տրվել ՀԽՍՀ ՔՕ 67 և 68 հոդվածներով: Բացենք Քրեական օրենսգիրքը և կարդանք 67 հոդվածը. «Պրոպագանդի կամ ագիտացիայի համար, որով կոչ է արվում տապալելու, քայքայելու կամ թուլացնելու Խորհրդային իշխանությունը կամ հակահեղափոխական այս կամ այն առանձին հանցագործություն կատարելու (այս Օրենսգրքի 59–66-րդ հոդվածներով), այլև նույն բովանդակությամբ գրականություն պատրաստելու, պահելու և տարածելու համար կիրառվում է՝ ազատազրկում ոչ պակաս քան վեց ամիս ժամանակով:

Նույն այդ գործողությունների համար, եթե նրանք կատարվել են մասսայական խռովությունների ժամանակ կամ օգտագործելով մասսաների կրոնական կամ ազգային նախապաշարմունքները կամ պատերազմական պայմաններում և կամ պատերազմական դրության մեջ հայտարարված վայրում, կիրառվում են՝

այս Օրենսգրքի 59-րդ հոդվածով նախատեսված սոցիալական պաշտպանության միջոցները»[10]:

---

[9] *Փաստաթուղթը վերնագրված է՝ «Հանրային գրադարանի խորհրդին կից Հովհ. Թումանյանի ծննդյան 60-ամյակի տոնակատարության առթիվ կազմված հանձնաժողովի նիստի արձանագրությունից»:*

[10] *Հայկական ԽՍՀ քրեական օրենսգիրք, Երևան, 1938, էջ 51-52:*

Իսկ ի՞նչ էին նախատեսում 59-րդ հոդվածի սոցիալական պաշտպանության միջոցները. «Սոցիալական պաշտպանության միջոցի առավելագույն չափը – գնդակահարություն կամ աշխատավորության թշնամի հայտարարելը՝ գույքի կոնֆիսկացիայով և միութենական հանրապետության, իսկ դրա հետևանքով նաև ԽՍՀ - Միության քաղաքացիությունից զրկելով և ընդմիշտ արտաքսելով ԽՍՀ Միության սահմաններից: Մեղմացնող հանգամանքներ լինելու դեպքում թույլատրվում է սոցիալական պաշտպանության միջոցն իջեցնել մինչև ազատազրկում ոչ պակաս քան երեք տարի ժամանակով, ամբողջ գույքի կամ նրա որոշ մասի կոնֆիսկացիայով»[11]:

ՀԽՍՀ ՔՕ 68-րդ հոդվածը առավել պարզաբանում և հստակեցնում է ամբողջական պատկերը: Ահավասիկ. «Ամեն տեսակ կազմակերպչական գործունեության համար, որի նպատակն է այս գլխում նախատեսնված հանցագործություններից որևէ մեկը նախապատրաստելու կամ կատարելու նպատակով ստեղծված կազմակերպությանը մասնակցելու համար կիրառվում են.

այս գլխի համապատասխան հոդվածներում նախատեսված սոցիալական պաշտպանության միջոցները»[12]:

Դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի հոգեկան դրամա է ապրել Մ. Գևորգյանը՝ իմանալով իրեն առաջադրված մեղադրանքների մասին: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ Մ. Գևորգյանի իրավաբանական կրթությունը և նախկինում փաստաբանությամբ զբաղվելը այս դեպքում օգտաշատ են եղել: ՀԽՍՀ Գերագույն դատարանի դատական կոլեգիայի 1939 թ. ապրիլի 29-ի որոշմամբ նա լիովին արդարացվել է:

1941 թ. դեկտեմբերին Մ. Գևորգյանը նշանակվում է Հեղինակային իրավունքների պահպանության Համամիութենական վարչության հայկական բաժնի տնօրեն:

Մ. Գևորգյանը զբաղվել է նաև գիտական գործունեությամբ: Հայաստանի ազգային գրադարանի «Հակոբ Մանանդյանի ֆոնդ»-ում պահպանվում է նրա գրած ատենախոսության սեղմագիրը. Геворгян М. А. История Армении Фауста Бузанда: Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук. Ереван 1949. 15 с.

ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը 1953 թ. հրատարակել է Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն»-ը[13], որի թարգմանությունը գրաբարից ռուսերեն և ծանոթագրությունները կատարել է Մ. Ա. Գևորգյանը: Գրքի առաջաբանը գրել է ակադեմիկոս Սուրեն Երեմյանը:

Հիշատակելի է Մ. Գևորգյանի «Ա. Ս. Գրիբոյեդով» գիտական աշխատությունը[14]:

Մ. Գևորգյանը թարգմանել է Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը, որի կրճատ տարբերակը հրատարակվել է 1948 թ.[15]: «Վերք Հայաստանի» վեպի 1955

---

[11] *Նույն տեղում, էջ 44-45:*

[12] *Նույն տեղում, էջ 52:*

[13] История Армении Фавстоса Бузанда. Пер. с древнеарм. и ком. М. А. Геворгяна, под ред. С. Т. Еремяна, вступит. статья Л. С. Хачикяна. Ереван, 1953.

[14] *«Նոր ուղի» (Գրական-գեղարվեստական, հասարակական, քաղաքական, տնտեսական և գիտական ամսագիր), Երևան, 1929, № 2-3, էջ 207-214:*

[15] Х. А б о в я н. Избранное. М., 1948, с. 15–144.

*թ. հրատարակությունն ամբողջական է: Բառացի թարգմանությունը կատարել է Մ. Գևորգյանը, գրական թարգմանությունը՝ Ս. Շերվինսկին[16]: «Վերք Հայաստանի» վեպի մի հատված լույս է տեսել «*Братство*» ժողովածուում 1957-ին[17]:*

Ըստ Գ. Ստեփանյանի «Կենսագրական բառարան»-ի և Հ. Խաչատրյանի «Գրական տեղեկատու»-ի, Մ. Գևորգյանը ռուսերեն է թարգմանել նաև Գ. Սունդուկյանի «Խաթաբալա»-ն և Ալ. Շիրվանզադեի «Պատվի համար»-ը: Հայկական սովետական հանրագիտարանում վերոնշյալ գործերի թարգմանության մասին որևէ հիշատակություն չկա: Մեզ չհաջողվեց մատենագիտական աղբյուրներում գտնել «Խաթաբալա» և «Պատվի համար» գործերի թարգմանության հրատարակությունները:

Սակայն որոնումների ընթացքում պարզեցինք, որ Մամիկոն Գևորգյանը թարգմանել է նաև Ակսել Բակունցի «Միրհավ»-ը, որը զետեղվել է ռուսերեն լույս տեսած երկու ժողովածուում[18], ինչպես նաև Սուրեն Այվազյանի պատմվածքները, որը հրատարակվել է 1956-ին[19]:

Մ. Գևորգյանը ռուսերենից հայերեն է թարգմանել Ա. Պուշկինի «Ճանապարհորդություն դեպի Արզրում» գործը, որն ունեցել է չորս հրատարակություն[20]: Իսկ Ալեքսանդր Օստրովսկու «Արդյունավոր պաշտոն» հինգ գործողությամբ կոմեդիան և «Անօժիտը» չորս գործողությամբ դրաման (վերջինիս՝ թարգմանությունը Արշ. Տեր-Հովնանյանի հետ) լույս են տեսել 1948-ին[21]:

Գրել է մի քանի դրամա, որից երկուսը՝ «Փառանձեմ» և «Վարդազար» խաղացվել են հայ բեմերում: 1922 թ. հունվարի 25-ից մայիսի31-ը Մ. Գևորգյանի «Վարդազար» պիեսը չորս անգամ ներկայացվել է Պետական թատրոնում[22] (այժմ Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն) Լևոն Քալանթարի բեմադրությամբ: «Խորհրդային Հայաստան» թերթում ընդարձակ տեղեկատվություն է տպագրվել «Վարդազար» պիեսի և նրա սյուժետային գծի մասին[23]: «Վարդազար» պատմահոգեբանական դրամայում «հեղինակն արծարծում է մարդկային անհատի ազատության, պարտքի զգացման և սիրո պրոբլեմները, դրա համար գտնելով հոգեբանորեն

---

[16] Х. А б о в я н. Раны Армении. Скорбь патриота [Лит. перевод С. В. Шервинского по дословному переводу М. А. Геворгяна. Вступит. статья С. М. Базьяна с. V–XXIV]. Ереван, 1955.

[17] Братство. Литературно-художественный сборник писателей Закавказья. Ереван, 1957 (Х. А б о в я н. Раны Армении (отрывок из одноименного романа. пер. М. Геворгян, с. 293–298).

[18] А. Б а к у н ц. Фазан.– Антология армянской советской литературы. Вып. XVI, Ереван, 1957 с. 154–158.

А. Б а к у н ц. Фазан.– Избранные страницы советской армянской литературы. Проза. Ереван, 1960, с. 205–212.

[19] С. А й в а з я н. Зангезурские рассказы. Ереван, 1956.

[20] *Ա. Ս. Պ ո ւ շ կ ի ն. Ճանապարհորդություն դեպի Արզրում, Երևան, 1937, ն ո ւ յ ն ի՝ Ճանապարհորդություն դեպի Արզրում, երկրորդ հրատ, Երևան, 1937 («Պուշկինյան գրադարան» մատենաշար), ն ո ւ յ ն ի՝ Ընտիր երկեր. երեք հատորով, հ. 2. Երևան, 1937 («Ճանապարհորդություն դեպի Արզրում», թարգմ. Մ. Գևորգյան, էջ 273-329), ն ո ւ յ ն ի՝ Հեքիաթներ, բանաստեղծություններ, արձակ էջեր: Միհատորյակ մանուկների և պատանիների համար, Երևան, 1937 (մի հատված «Ճանապարհորդություն դեպի Արզրում» գրքից, թարգմ. Մ.Գևորգյան, էջ 141-156):*

[21] *Տե՛ս Ա. Ն. Օ ս տ ր ո վ ս կ ի. Ընտիր երկեր: Կազմեց և խմբագրեց Ս. Պայազատ, Երևան, 1948, էջ 43-88, 289-333:*

[22] *«Խորհրդային Հայաստան», 10. VI. 1922:*

[23] *«Խորհրդային Հայաստան», 30. V. 1922:*

պատճառաբանված, դրամատիզմով հարուստ, արտաքին մելոդրամատիկ էֆեկտներից զերծ լուծում»[24]: Վարդազարի դերը համանուն դրամայում խաղացել է Լևոն Քալանթարը[25]:

Մ. Գևորգյանը գրել է «Գիքոր» ֆիլմի սցենարը (բեմադրող Ամասի Մարտիրոսյանի հետ), ինչպես նաև «Շունն ու կատուն» մուլտիպլիկացիոն ֆիլմի սցենարը, «Պեպո» գեղարվեստական ֆիլմի լիբրետոն և այլն:

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի՝ «Գրական թերթ»-ի ֆոնդում պահպանվում է Մ. Գևորգյանի «Ինժեներ Դարբինյան» անտիպ պիեսը:

Մ. Գևորգյանի գրական գործունեությունն այնքան ակնառու է եղել, որ նրան ժամանակակից արվեստագետ, Հայկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Դանիել Դզնունին նրա անունը որպես գրողի և սցենարիստի նշել է Ա. Բակունցի, Մ. Մանվելյանի, Ե. Չուբարի կողքին[26]:

Հատկապես նշանակալից է Մ. Գևորգյանի ներդրումը հայ բառարանագրության գործում: 1943–1960 թթ. նա աշխատել է ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում: 1945-ին լույս է տեսել Ռուս-հայերեն բառարան, որը նա կազմել և խմբագրել էր հայտնի գիտնականների հետ[27]:

Մ. Գևորգյանի գործունեությունը Ռուս-հայերեն քառահատոր բառարանի ստեղծման գործում դժվար է գերագնահատել: Նա եղել է բառարանի այն ակտիվ կազմողներից և խմբագիրներից մեկը, ում անունը կա չորս հատորում: Այդ հիմնարար աշխատանքին իրենց մասնակցությունն են բերել այնպիսի մեծանուն լեզվաբաններ, ինչպիսիք են՝ Գրիգոր Ղափանցյանը, Արարատ Ղարիբյանը, Էդվարդ Աղայանը և ուրիշներ[28]:

Մ. Գևորգյանի կյանքի ուշագրավ իրողություններից էր նրա մտերմությունը Եղիշե Չարենցի հետ: Այն սկիզբ է առել 1921-ի հուլիսին Թիֆլիսի հանդիպումով, ապա զարգացել Մ. Գևորգյանի Երևան տեղափոխվելով, ուր երկուսն էլ սկզբնական շրջանում ապրել են «Ֆրանսիա» (ներկայիս «Երևան») հյուրանոցում, «Նորք» ամսագրի հրատարակման շրջանում և տևել մինչև Չարենցի եղերական վախճանը: Հայտնի են ավելի քան 10 նամակ, որ Չարենցը գրել է Մ. Գևորգյանին:

Նամակներից մեկում նա գրում է.

«Միրելի Մամիկոն,

Ես շատ դժգոհ եմ քեզնից, որ մինչև օրս դու ոչ մի անգամ ինձ չես այցելել: Մի՞թե երբևիցե ես քեզ հետ եղե՞լ եմ այլ հարաբերության մեջ, քան սրտառուչ:

---

[24] *Բ. Հարությունյան. Հայ սովետական թատրոն. 1917-1977, Երևան, 1985, էջ 24:*

[25] *Ս. Հարությունյան. Սովետահայ թատրոն (1917-1932), Երևան, 1968, էջ 89:*

[26] *Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին (Չարենցի հետ), Երևան, 1961, էջ 268:*

[27] *Ռուս-հայերեն բառարան, կազմեցին և խմբագրեցին Ա. Ս. Ղարիբյան, Ե. Գ. Տեր-Մինասյան, Մ. Ա. Գևորգյան, Երևան, 1945:*

[28] *Ռուս-հայերեն բառարան, չորս հատորով, Երևան, հ. 1, 1954, 752 էջ, հ. 2, 1956, 688 էջ, հ. 3, 1957, 800 էջ, հ. 4, 1958, 808 էջ:*

Անցիր, երբ ուզում ես, միայն երեկոյան ժամերին՝ 6–10-ը:

Քո՝ Չար

<29 VI,1936, Երևան>[29]:

Այսպես կարող էր գրել, Չարենցի արտահայտությամբ, «սրտառուչ» հարաբերություններ ունեցողը:

Ե. Չարենցը մակագրությամբ մի քանի գիրք է նվիրել Գևորգյանին: Այսպես, «Էպիքական լուսաբաց» գրքի վրա մակագրել է. «Միրելի Մամիկոնին, խորը սիրով, որ ինձ սովորեցրեց սիրել պոետներից ամենապայծառին ու վսեմին՝ Պուշկինին: Եղիշե Չարենց. 1930-23.1, Երևան»[30]: «Ես իրավունք ունեմ պարծենալու այդ մակագրությամբ»[31],– գրել է հետագայում Մ. Գևորգյանը:

Մ. Գևորգյանն ունեցել է երկու զավակ: Աղջիկը՝ Եկատերինան, ծնվել է 1921-ին, տղան՝ Վահանը, 1925-ին: Ապրել են Երևանում՝ Մաշտոցի պողոտայի 20 շենքի բնակարան 7-ում:

Մ. Գևորգյանը մահացել է 1962 թ. հունիսի 17-ին Երևանում:

ՌԱՖԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

---

[29] *Ե. Չարենց. Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1967, էջ 456:*

[30] *Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին (Չարենցի հետ), էջ 262:*

[31] *Նույն տեղում:*